

Ճշդել և Պահպանել Սահմանները

Իբրև գործատեր ձեր գործն է սահմանել ձեր մատակարարին ակնկալությունները:

Աշխատանքներու և ժամերու սահմանափակումներ:

- Ձեր մատակարարին մի պահանջէք չլիազօրուած ժամեր կամ աշխատանքներ կատարել: IHSS-ը չլիազօրուած աշխատանքներու և յաւելեալ ժամերու համար չի վճարեր:

Մասնագիտական մօտեցում, երբ աշխատանքի վայրը տուն է:

- Ձեր մատակարարը պզտիկներ կամ ուրիշներ պէտք չէ բերէ ձեր տուն: Ձեր տունը գործի տեղ է և իր գործը ձեզի IHSS-ի ծառայութիւն մատուցել է:
- Ձեր մատակարարը աշխատելու տեղ իր ժամանակը պէտք չէ անցընէ ձեզի հետ այցելութիւններ տալով: Ձեր մատակարարին քաղաքավար ձևով պէտք է յիշեցնել, որ մնայ իր գործին վրան:
- Ճաշի ժամուն աշխատելու պարագային ան իր ճաշը կամ ընթրիքը պէտք է հետը բերէ:
- Ձեր ունեցուածքը կամ առարկաները պէտք չէ գործածէ իր անձնական պէտքերուն համար:

Պաշտպանել ձեր անձնական տուեալները:

- Ձեր մատակարարը ձեր անունը, հասցէն, հեռաձայնի թիւը, առողջականը, ընտանեկան վիճակը կամ պահուածքը պէտք չէ կիսէ ուր չլիազօրուած անձի հետ:



- Կարևոր է, որ ձեր մատակարարը արտակարգ դէպքի պարագայի համար գիտնայ ձեր առողջական վճակին և ընտանեկան կապերուն մասին: Ամէն պարագայի, միւս անձնական տեղեկութիւնները գաղտնի պահէք:
- Ձեր չէքի տետրակը, պանքի հաշիւը, քրետիք քարթերը, նիւթական տեղեկութիւնները և դրամը, որ կը պահէք տունը պէտք է հասանելի չըլլան ձեր մատակարարին:
- Դուք ձեր թնակարժէք առարկաները պէտք է ապահովէք վստահելի տեղ մը և ձեր մատակարարին չըսէք, թէ ուր պահուած են:

Բաներ որոնցմէ պէտք է խուսափիք

- Ձեր մատակարարին մի արտօնէք որևէ ատեն ձեր անունը ստորագրել:
- Սխալ ժամաքարթ մի ստորագրէք:
- Պարապ ժամաքարթ մի ստորագրէք:
- Ձեր պանքի տեղեկութիւնները ձեր մատակարարին հետ մի կիսէք և անոր անունը մի ակնարկէք ձեր խնայողական, չէքի կամ քրետիթ քարթի հաշիւներուն վրայ:
- Մի յայտնէք ձեր սոշըլին թիւը:
- Երբ ձեզի համար բան մը գնելու դրամ տաք ձեր մատակարարին, ստացագիրը պահանջեցէք:
- Թանկարժէք առարկաներ կամ փաստաթուղթեր երևցող տեղ մի դնէք:
- Տարբեր բաներու վրայ աչք պահէք, ինչպէս հեռաձայնի գործածութիւն, դեղորայք և այլն:
- Մի ձգէք, որ ան ձեզմէ դրամ, ինքնաշարժ կամ անձնական առարկաներ փոխ առնէ:
- Ձեր մատակարարին անձնական կեանքին մի խառնուիք: